

Թիւ 24771

Փետրուար 17, 1976

Արժանաշնորհ  
Տ. ԼԵԼՈՆ ՔԻՆՅ. Առաքելեան  
Հովիւ Ս. Համբարձձւմ Եկեղեցւոյ  
Նախագահ Ժխական Խորհուրդի  
Պրիֆֆորթ.

Սիրելի Տէր ԼԵԼՈՆ,

Ստացած ենք Փետրոսայր 2, 1976 թուակիր 2եր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ 2եր նախագահութեամբ Յունուար 25ին գումարուած համայնքիդ ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի երեք անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ 2եր ծխական ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կի վաւերացնենք ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան ղրկել ծխական Խորհուրդի նորընտիր Գիւանի անդամոց անունները:

Օրհնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք 2եզի եւ 2եր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան սարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՍԸ  
Առաջնորդ

Մարտի Ազարեան  
Ռիչըրտ Նաճարեան  
Տարուին ժամկոչեան